Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 23.12.2020թ. թիվ 2012051882 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<25>> 01 2021թ. 7-13 606 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Հայկ Աղայանի ՄԴ/2536-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Յան.Ռայնիսի փողոցի 105-րդ շենքի 25-րդ բնակարանի բնակիչ Հայկ Աղայանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012051882 որոշումը՝ նշելով, որ <<Կանգ-գիծ>> գծանշումը հատել է թույլատրող դեղին ազդանշանի ներքո և պարտավոր է եղել ազատել խաչմերուկը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012051882 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը** (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի, այն է դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը: Այդ ազդանշանի դեպքում երթևեկելի մասի վրա գտնվող հետիոտները պետք է ազատեն այն, իսկ եթե դա հնարավոր չէ, կանգ առնեն հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող գծի վրա) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին, իսկ նույն որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի, լուսացույցի կարմիր ազդանշանն, այդ թվում նաև՝ թարթող, արգելում է երթևեկությունը: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի <<Կանգ-գիծ>> գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար,

ինչպես նաև այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ապացուցում է, որ դիմումատուի կողմից վարած <<MERCEDES-BENZ>> մակնիշի 35RC492 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը Երևան քաղաքի Կոմիտասի-Վրացական փողոցների խաչմերուկի հատվածում լուսացույցի դեղին ազդանշանի ներքո հատել է <<Կանգ-գիծ>> գծանշումը 03.12.2020թ ժամը 16:55:30-րդ վայրկյանին, երբ իրավախախտումն արձանագրված խաչմերուկում առկա լուսացույցի վրա տեսանյութի 16:55:28-րդ վայրկյանից միացված է եղել (**դեղին**) արգելող ազդանշան:

Հարկ է նշել, որ դիմումատուի կողմից վարած տրանսպորտային միջոցը լուսացույցի դեղին ազդանշանի միանալու ժամանակ <<Կանգ-գիծ>> գծանշումը հատելուց առաջ գտնվել է անշարժ վիճակում և հնարավորություն է ունեցել առանց կտրուկ արգելակելու կանգնել <<Կանգ-գիծ>> գծանշման առջև, որով հերքվում է ՀՀ կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի պահանջի ռեժիմում արարք կատարելու հանգամանքը:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը, հետևաբար վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012051882 որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 23.12.2020թ. թիվ 2012051882 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Հայկ Աղայանին:

Ե.Կարապետյան

Կատարող Է.Հովհաննիսյան
Հեռ. 011-54-47-83